ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՎՀ-ԳՀԱՇՁԲ-20/04/03

ք. Վայք «18» մայիսի2020թ.

«Վայքի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Թ. Ավետյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ԱՁ Համլետ Գեղամյանը, ի դեմս Համլետ Գեղամյանի, որը գործում է ձեռնարկատիրության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Վայքի համայնքապետարանի վարչական շենքի առանձնացված սենյակի ներքին հարդարման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 35 օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի :

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 2578575 (երկու միլիոն հինգ հարյուր յոթանասունութ հազար հինգ հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված

---

[31] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սպանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Վայք համայնքապետարան	Ա/Ձ <<Համլետ Գեղամյան Հրայրի>>
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչ.	Բանկը՝ <<ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ >>
Հ/Հ 900342121036	Հ/Հ 220449720097000
ՀՎՀՀ 08913477	ՀՎ/ՀՀ՝ 88737367
Համայնքի ղեկավար՝	Անհատ ձեռնարկատեր՝
Թ. Ավետյան	Հ. Գեղամյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
«18» մայիսի2020թ.
ՎՀ-ԳՀԱՇՁԲ-20/04/03 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

«ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍԵՆՅԱԿԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN	հիմնավորում	Աշխատանքի անվանումը	Չափ միավոր	Քանակ	1 միավ. ընդ. արժեք հազ. դրամ	Ընդհանուր արժեքը հազ. դրամ
1	2	3	4	5	6	7
	Համաշին. աշխատանքներ					
	Քանդման աշխատանքներ					
1	46-80	Խամքարաբետոնե սալիկներով միջնորմները քանդում	մ³	2,64	6,92	18,2688
2	46-102	Ապամոնտաժել փայտատաշեղային սալերով հատակը	մ²	36,70	0,398	14,6066
3	46-124	Դռների և պատուհանների ապամոնտաժում	մ²	15,50	1,053	16,3215
4	11-225	Պատերի և առաստաղի մաքրում գաջի սվաղից	մ²	48,40	0,692	33,4928
5	11-228	Շեպերի գաջե սվաղի մաքրում	մ²	19,60	0,834	16,3464
6	15-661 գ=0,6 ընդ.	Քերել առաստաղի ներկանյութը	մ²	51,26	0,321	16,4545
7	46-34	Քերել պատերի ներկանյութը	մ²	109,50	0,214	23,4330
8	Գնաց.3 C310-4 տ.մ, կ.29	Շին աղբի բարձում և տեղափոխում 3կմ	տ	10,50	1,798	18,8790
	Նորոգման աշխատանքներ					
1	E8-140	Միջնապատեր 100մմ հաստությամբ պեմզաբլոկի շարվածքով	մ³	0,930	25,706	23,9066
2	E6-108	Անցքերի բետոնացում B12,5 դասի բետոնով	մ3	0,460	33,384	15,3566
3	շուկա	Ամրան 12AIII	տ	0,020	319,608	6,3922
4	շուկա	Ամրան 6AI	տ	0,010	313,635	3,1364
5	6-168	Միաձույլ ե/բ բարավորների պատրաստում B-15 դասի բետոնից	մ3	0,054	85	2,7432
6	շուկա	Ամրան 12AIII	տ	0,005	319,608	1,5980
7	շուկա	Ամրան 6AI	տ	0,002	313,607	0,6272
8	15-264	Սանհանգույցի պատերի ց/ա սվաղ ներսի կողմից	մ²	13,900	1,767	24,5613
9	Վ11-182	Պատերի գաջե սվաղ	մ²	43,400	1,946	84,4564
10	15-277-1	Պատուհանների – դռների շեպերի գաջե սվաղի իրականացում	մ²	13,200	4,012	52,9584
11	E15-664	Պատերի և շեպերի	մ²	166,100	1,280	212,6080

		ներկում լատեքսային ներկով				
12	Վ13-134	Սանհանգույցի խցիկի երեսապատում կերամիկական սալերով 2,4մ բարձրությամբ	մ²	10,400	5,648	58,7392
13	15-256	Պատուհանագոգը և շեպերը սվաղել դրսից ցեմ/ավազային շաղախով	մ²	6,400	1,492	9,5488
		Հատակներ				
1	27-38-1	Կոպճավազային շերտ իրականացում տոփանումով /հատակներում/ Н=30սմ	մ3	11,000	2,067	22,7370
2	Е11-11	Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում В12,5 դասի Н=6սմ	մ³	2,200	30,624	67,3728
3	11-55	Հատակների և զուգարանախցի ց/ա հարթեցնող շերտ Н=3սմ	մ²	36,700	1,254	46,0218
4	11-135	Հատակների կառուցում խեցեսալից	մ²	36,700	5,595	205,3365
5	11-135 20-3	Շրիշակների իրականացում կերամիկական սալերով 10սմ	մ²	3,200	6,0	19,20
6	շուկա	Լինոլյումե հատակի իրականացում միջանցքում	մ²	20,1	1,973	39,6573
		Առաստաղ				
1	15-246-1	Առաստաղի գաջե սվաղ	մ²	5,000	2,309	11,5450
2	10--64	Կախովի առաստաղի պատրաստում պլաստմասե նյութից/ ս/հանգույց և պահեստային սենյակում /	մ2	11,700	4,732	55,3644
3	Е15-665 15-664	Առաստաղի ներկում լատեքսային ներկով	մ²	45,000	1,634	73,5300
		Դռների պատուհանների տեղադրում				
		Դռներ				
1	Գնաց	Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ	մ²	6,800	34,52	234,7360
		Պատուհաններ				
1	Գնաց	Մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ, բացվող	մ²	3,880	26,583	103,1420
2	Գնաց	Մետաղապլաստե,	մ²	3,880	17,474	67,7991

		բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ, չբացվող				
3	Գնաց	Մետաղապլաստե սպիտակ պատուհանների տեղադրում չբացվող /կամար/	մ²	2,600	26,883	69,8958
4	Շուկա	Մետաղապլաստե պատուհանի ցանց 2 հատ	մ²	2,000	6,236	12,4720
5	Գնաց. 2	Պատուհանագոգերի տեղադրում 40սմ լայնությամբ սպիտակ	գծմ	5,600	3,674	20,5744
	Ընդամենը					1703,819
						/
	Ջրամատակարարման ներքին ցանց					
1	17-80 q=0,8	Լվացարանի ապամոնտաժում	հատ	1,00	1,735	1,7350
2	E16-261 q=0,5	Պոլիպրոպիլենային խողովակների մոնտաժում Φ20*1,9մմ	մ	4,50	1,343	6,0435
3	Շուկա	D20մմ ֆիտինգներ	հատ	2,00	0,484	0,9680
4	16-135	Փական Φ20	հատ	2,00	2,957	5,9140
5	Շուկա	Պոլիպրոպիլենային խողովակների ձևավոր մասեր Φ20մմ /եռաբաշխիչ, անկյունակ/	հատ	5,00	0,053	0,2650
6	17-53	Լվացարանի ծորակ բարձր որակի	հատ	1,00	6,95	6,950
7	E17-80	Լվացարանի տեղադրում	լրակ.	1,00	14,092	14,092
8	Շուկա	Լվացարանի հայելի /0,5*0,8/	հատ	1,00	16,667	16,6670
	Ընդամենը					52,6
	Ներքին կոյուղագծեր					
1	16-34	Պոլիէթիլենային խողովակների տեղադրում Φ=110, ռետինե սեղմիչ օղակներով փորձարկումով	մ	3,00	2,303	6,9060
2	16-33	Պոլիէթիլենային խողովակների տեղադրում Φ=50, ռետինե սեղմիչ օղակներով փորձարկումով	մ	7,00	1,316	9,2120
3	Շուկա	ծունկ 110մմ α=90՝	հատ	1,00	0,484	0,4840
4	Շուկա	ծունկ 50մմ α=90՝	հատ	3,00	0,222	0,6660
5	Շուկա	Եռաբաշխիչ 50*50*50մմ	հատ	2,00	0,3	0,60
6	Շուկա	Եռաբաշխիչ 50*100*100մմ	հատ	1,00	0,448	0,448
7	E17-61	Նստակոնքի տեղադրում	լրակ.	1,00	26,9	26,9
8	17-36	Հոսակի տեղադրում	հատ	1,00	4	4
	Ընդամենը					49,2
	Ներքին էլ. լուսավորություն					

	Ապամոնտաժվող սարքավորումներ					
1	8-599-1 Գ=0.4	Լուսատու լամպով	լրակ	3,00	0,721	2,1630
2	8-591-2 Գ=0.4	Խրոցակային վարդակ և անջատիչ տուփերով	լրակ	8,00	0,089	0,7120
	Էլեկտրական լուսավորություն					
1	8-599-2	Լուսատու LED լամպով 220Վ, 24,Վտ,	լրակ.	9,00	4,915	44,2350
2	8-603-1	Լուսատու անջրանթափանց կոմպակտ LED 220Վ, 18,Վտ , տեղադրումով	լրակ.	1,00	4,406	4,406
3	8-402-2 շուկա	Հաղորդալար պղնձե, մեկուսացված, բաժանիչ հիմքով, հատվածքը 2x2,5մմ2 ՊՊԲ	մ	45,00	0,512	23,04
4	8-402-2 շուկա	Հաղորդալար պղնձե մեկուսացված, հատվածքը 2x1,5մմ2 ՊՊԲ	մ	55,00	0,35	19,250
5	8-591-2 շուկա	Անջատիչ միստեղանի, տուփով 220Վ, 6Ա	հատ	2,00	1,112	2,224
6	8-591-2 շուկա	Անջատիչ երկստեղանի, տուփով 220Վ, 6Ա	հատ	1,00	1,294	1,294
7	8-591-7	Խրոցակային վարդակներ, հողանցման հպակով տեղադրման տուփով 220Վ, 10Ա	հատ	8,00	1,843	14,7440
	Ընդամենը					112,0
	Ջեռուցում – օդափոխություն					
	Ջեռուցման համակարգի իրականացում					
1	Բ11-57	Պատերում անցքերի բացում D=50մմ	տեղ	6,00	2,285	13,7100
2	Ե16-261 k=0.5	Պոլիպրոպիլենային ալյումինե շերտով խողովակաշարի տեղադրում պատերի վրա և հատակի բետոնի մեջ Φ20մմ PN20,լվացումով, փորձարկումով, քլորացումով	զմ	40,00	2,154	86,16
3	Բ11-57	Անցքերի փակում գաջե շաղախով	տեղ	6,00	2,163	12,9780
4	Ե16-134	Փականների տեղադրում Φ20մմ	հատ	6,00	3,836	23,0160
5	Շուկա	D15-20մմ ձևավոր մասեր	հատ	18,00	0,053	0,9540
6	18-112	Ալյումինե ջեռուցման մարտկոցների տեղադրում H=500մմ	էկմ	26,00	0,591	15,3660
7	Շուկա	Ալյումինե ջեռուցման մարտկոցների արժեքը	սեկց	26,00	3,441	89,4660
8	Շուկա	Մարտկոցների ամրացման դետալներ	կոմպ	3,00	0,448	1,3440
9	Շուկա	Խողովակների ամրացման ամրակներ	հատ	80,00	0,075	6,0
	Օդափոխության համակարգի իրականացում սանհանգույցում					
1	Բ11-57	Պատերում անցքերի	հատ	1,00	3,750	3,750

		բացում D=110մմ				
2	46-82	Պատերի կոնստրուկցիաներում անցքերի փակում	մ3	0,02	20,492	0,4098
3	E20-736	կ/խ առանցքային օդամուղ N=0,15կվտ L=800մ3/ժ	հատ	1,00	9,243	9,2430
4	E20-409	Արտածող ճաղավանդակ d=110մմ	հատ	1,00	3,756	3,756
5	16-34	Պոլիէթիլենային խողովակների տեղադրում Φ=110, ռետինե սեղմիչ օղակներով փորձարկումով	մ	2,00	1,622	3,2440
6	Շուկա	ծունկ 110մմ α=90՝	հատ	1,00	0,48	0,480
	Ընդամենը					269,8
	Ընդամենը					2187,621
	Վերադիր ծախսեր 13,30%					290,954
	Ընդամենը					2478.575
	Շահույթ 11%					100,0
	Ընդամենը					2578,575

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Վայոց ձորի մարզ ք. Վայք Շահումյան 18 հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վայք համայնքապետարան
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
Հ/Հ 900342121036
ՀՎՀՀ 08913477
Համայնքի ղեկավար՝
Թ. Ավետյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Ա/Ձ <<Համլետ Գեղամյան Հրայրի>>
Բանկը՝ <<ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ >>
Հ/Հ 220449720097000
ՀՎ/ՀՀ՝ 88737367
Անհատ ձեռնարկատեր՝
Հ. Գեղամյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«18» մայիսի2020թ.
ՎՀ-ԳՀԱՇՁԲ-20/04/03 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
« ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍԵՆՅԱԿԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ » ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	**ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍԵՆՅԱԿԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ**	*ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը*	35 օր
ԸՆԴԱՄԵՆԸ			**35 օր**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վայք համայնքապետարան
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
Հ/Հ 900342121036
ՀՎՀՀ 08913477
Համայնքի ղեկավար՝
Թ. Ավետյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Ա/Ձ <<Համլետ Գեղամյան Հրայրի>>
Բանկը՝ <<ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ >>
Հ/Հ 220449720097000
ՀՎ/ՀՀ՝ 88737367
Անհատ ձեռնարկատեր՝
Հ. Գեղամյան

/ստորագրություն/
Կ.Տ

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:*

Հավելված N 3
«18» մայիսի2020թ.
ՎՀ-ԳՀԱՇՁԲ-20/04/03 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45461100	*Վայքի համայնքապետարանի վարչական շենքի առանձնացված սենյակի ներքին հարդարման աշխատանքներ*	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վայք համայնքապետարան
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչ.
Հ/Հ 900342121036
ՀՎՀՀ 08913477
Համայնքի ղեկավար՝
Թ. Ավետյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Ա/Ձ <<Համլետ Գեղամյան Հրայրի>>
Բանկը՝ <<ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ >>
Հ/Հ 220449720097000
ՀՎ/ՀՀ՝ 88737367
Անհատ ձեռնարկատեր՝
Հ. Գեղամյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
«18» մայիսի2020թ.
ՎՀ-ԳՀԱՇՁԲ-20/04/03 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 4.1
«18» մայիսի2020թ.
ՎՀ-ԳՀԱՇՁԲ-20/04/03 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն